ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով բաց մրցույթով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկային ստուգումների էլեկտրոնային կառավարման համակարգ»-ի և դրա ենթահամակարգերի սպասարկման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 15.05.2024թ. N 152/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.06.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Արզումանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս.Պատուրյանը, Ա.Նազարյանը, Հ.Նաջարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Հ.Քաբաբյանը:

1. 1" Հայտերի ուսումնասիրության արդյունքների մասին

-Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի հայտը, արձանագրեց՝

-«Դանիամ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-«Դանիամ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին վերաբերյալ

1" «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող «Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

2. Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ոչ գնային չափանիշները գնահատվել են հրավերի 2.4 կետի համաձայն:

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումները
		«Դանիամ» ՍՊԸ
Մասնագիտական փորձառություն	35	35
Աշխատանքային ռեսուրսներ	35	35
Ընդամենը	**70**	**70**

3. Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով՝ համաձայն հրավերով սահմանված բանաձևի:

Գնահատման չափանիշը	Առավելագույն միավորը	Մասնակիցների անվանումները
		«Դանիամ» ՍՊԸ
Գնային պայման	30	30
Ընդամենը	**30**	**30**

Ընտրված մասնակից է ճանաչվել այն մասնակիցը, որին տրված գնահատականների հանրագումարն (ՄՓՄ + ԱՌՄ + ՖՄՄ) ամենաբարձրն է:

	Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)
Հ/Հ	**Մասնակիցների անվանումները**
	«Դանիամ» ՍՊԸ
1	**100**

3. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «Դանիամ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

1. «Դանիամ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Դանիամ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Դանիամ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Արզումանյան

Անդամներ՝ Ս.Պատուրյան

Ա.Նազարյան

Հ.Նաջարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան